ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

26 ՄԱՐՏԻ 2021թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու հրավերով նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:
Բացակա էին՝ Հովհաննես Խաչատրյանը, Արամայիս Մքոյանը
Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արծրունի Իգիթյանը
Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Լուսինե Մաթեվոսյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2021 թվականի մարտի
26-ի թիվ 2 նիստի հետևյալ օրակարգը.
1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքից գերեվարված զինծառայողների և սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական աջակցություն տրամադրելու մասին
2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքի սեփականություն համարվող Ջրաշինարարների բանավան, 3-րդ փողոց, շենք 1/3, թիվ 9 բնակարանը վարձակալին նվիրելու մասին
3.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի « Բասեն բնակավայրի խմելու ջրի ջրագծի անցկացում» ծրագրին հավանություն տալու մասին
4.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասում/բնակավայր՝ Ախուրյան/քաղաքացի Արա Սաշայի Սերգոյանի կողմից ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարված արտադրական նպատակային նշանակության

շինությունը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով կառուցապատողին օտարելու մասին
5.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասում/բնակավայր՝ Ախուրյան/ քաղաքացի Գերասիմ Համբարձումի Համբարյանի կողմից ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարված բնակավայրերի նպատակային նշանակության շինությունները և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով կառուցապատողին օտարելու մասին
6.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի մարզիկներին, մարզիչներին և հանրապետական առարկայական օլիմպիադայի մասնակիցներին դրամական աջակցություն տրամադրելու մասին
7.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 12-ի ոիվ 10 որոշման թիվ 1 հավելվածի մեջ լրացումներ կատարելու մասին
8.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրի նշանակության հողերից եվ արոտավայրերից աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու, օտարման մեկնարկային գին եվ պայմաններ հաստատելու մասին
9. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը վարձակալության տրամադրելու 2021 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին
10.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան գյուղի տարածքում՝ 08-007-0092-0001 ծածկագրով 0.5484 հեկտար հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին
11. Գագիկ Վարդանյանին «Հերոսները չեն մահանում» գրքի տպագրության համար դրամական աջակություն տրամադրելու մասին

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 14/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 3 ԳԵՐԵՎԱՐՎԱԾ ՋԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ԹՎՈՎ 29 ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետի,18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 20-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի անապահով ընտանիքների դիմումները և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու Ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի

եզրակացությունը՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021 թվականի բյուջեի 10.3.1 «Հարազատին կորցրած անձինք» ծրագրի «Հուղարկավորության նպաստներ բյուջեից» 4726 հոդվածով նախատեսված գումարներից թվով 4 անապահով ընտանիքների տրամադրել դրամական օգնություն՝ 100 000/մեկ հարյուր հազար/ դրամ՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021 թվականի բյուջեի պահուստային ֆոնդի պահուստային միջոցներ «Այլ նպաստներ բյուջեից» ծրագրի 4729 հոդվածից թվով 3 գերեվարված զինծառայողների ընտանիքներին և թվով 25 անապահով ընտանիքների տրամադրել դրամական օգնություն՝ ընդհանուր // դրամ՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 15/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՋՐԱՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ԲԱՆԱՎԱՆ 3-ՐԴ ՓՈՂՈՑ, ՇԵՆՔ 1/3, ԹԻՎ 9 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի բնակիչ Լենա Ավետիսյանիդիմումը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքի սեփականություն համարվող Ջրաշինարարների բանավան, 3-րդ փողոց, շենք 1/3(անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 26122017-08-0040, տրված 2017 թվականի դեկտեմբերի 26-ին) թիվ 9 բնակարանը՝ 66.27 քառակուսի մետր մակերեսով, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով նվիրել Լենա Նամեսի Ավետիսյանի յոթ անձից բաղկացած ընտանիքին՝
1.Ավետիսյան Լենա Նամեսի
2.Պապիկյան Գուրգեն Լյուդվիկի
3.Պապիկյան Լևոն Լյուդվիգի
4.Պապիկյան Արթուր Լյուդվիգի
5.Մկրտչյան Վարդուհի Թևանի
6.Պապիկյան Արտյոմ Արթուր
7.Պապիկյան Դավիթ Արթուրի
2.Բնակարանի նվիրելու հետ կապված ծախսերը վերապահել վարձակալին:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 16/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԲԱՍԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱԳԾԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ » ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթով՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է .

Տալ հավանություն՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Բասեն բնակավայրի խմելու ջրի ջրագծի անցկացում» սուբվենցիոն ծրագրին:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 17/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ/ԲՆԱԿԱՎԱՅՐ ԱԽՈՒՐՅԱՆ/ ԳԵՐԱՍԻՄ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՀԱՄԲԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿԱՄ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի Գերասիմ Համբարձունի Համբարյանը, իր դիմումի համաձայն, ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 19.32 քառակուսի մետր մակերեսով մառանը, 2.67 քառակուսի մետր լողավազանը,1.9 քառակուսի մետր արտադրական նշանակության շինությունների՝ ընդամենը՝ 23.89 քառակուսի մետր, և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի

սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշնակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-007-0069-0009 կադաստրային ծակագրով 0.006327 հեկտար մակերեսով հողամասի (վկայական 12022021-08-0045 անշարժ գույքի հասցեն՝Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Ախուրյանի խճուղի 28/1 մառան) ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքի ղեկավարի առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարվող ,օրինական ճանաչված 19.32 քառակուսի մետր արտաքին մակերեսով մառանը, 2.67 քառակուսի մետր լողավազանը,1.9 քառակուսի մետր մակերեսով պարիսպը՝ ընդհանուր մակերեսով ՝ 23.89 քառակուսի մետր և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերի նպատակային նշնակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-007-0069-0009 կադաստրային ծակագրով 0.006327 հեկտար մակերեսով հողամասը (վկայական 12022021-08-0045 անշարժ գույքի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Ախուրյանի խճուղի 28/1) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի կարգով 74498 (յոթանասունչորս հազար չորս հարյուր իննսունութ) դրամ ընդհանուր արժեքով, որից՝ 41091/քառասունմեկ հազար իննսունմեկ/ դրամը՝ շինության արժեք, 33407/երեսուներեք հազար չորս հարյուր յոթ / դրամը՝ հողամասի արրժեք, ուղղակի վաճառքով օտարել կառուցապատողին, քաղաքացի՝Գերասիմ Համբարձումի Համբարյանին (անձնագիր՝ AM 0497564 բնակության հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան Չարենցի փողոց, 8-րդ անցում տուն 20):
2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար՝ Արծրունի Իգիթյանին.
Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 18/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ/ԲՆԱԿԱՎԱՅՐ ԱԽՈՒՐՅԱՆ/ ԱՐԱ ՍԱՇԱՅԻ ՍԵՐԳՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման 39-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի Արա Սաշայի Սերգոյանը, իր դիմումի համաձայն, ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 526.58 քառակուսի մետր արտաքին մակերեսով արտադրական նշանակության շինությունների և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, պահեստարանների գործառնական նշանակության 08-007-0086-0072 կադաստրային ծակագրով 0.052658 հեկտար մակերեսով հողամասի (վկայական 15022021-08-0032 անշարժ գույքի հասցեն՝Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Հ. Դավթյան խճուղի, 9 պահեստ) ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող, օրինական ճանաչված 526.58 քառակուսի մետր արտաքին մակերեսով արտադրական նշանակության պահեստը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշնակության պահեստարանների գործառնական նշանակության 08-007-0086-0072 կադաստրային ծակագրով 0.052658 հեկտար մակերեսով հողամասը (վկայական 15022021-08-032 անշարժ գույքի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Հ. Դավթյան խճուղի,9 պահեստ) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի կարգով 1183753 (մեկ միլիոն մեկ հարյուր ութսուներեք հազար յոթ հարյուր հիսուներեք) դրամ ընդհանուր արժեքով, որից՝ 905718/ինը հարյուր հինգ հազար յոթ հարյուր տասնութ/ դրամը՝ շինության արժեք, 278035/երկու հարյուր յոթանասունութ հազար երեսունհինգ / դրամը՝ հողամասի արրժեք,վաճառել կառուցապատողին, քաղաքացի՝ Արա Սաշայի Սերգոյանին (անձնագիր՝ AM 0441749բնակության հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան Չարենցի 8փ., տուն 1):

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար՝ Արծրունի Իգիթյանին. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված

կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 19/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ,ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետի,18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 20-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետը՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021 թվականի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» 4727 հոդվածով հատկացված գումարներից դրամական աջակցություն տրամադրել՝

1.Հայաստանի Հանրապետության 2021 թվականի ձյուդոյի պատանիների առաջնության չեմպիոն, ձյուդոյի առաջնության 1-ին մրցանակակիր՝ Ախուրյան համայնքի Արևիկ բնակավայրի բնակիչ Սուսաննա Հայկազի Ստեփանյանին՝ 30000/երեսուն հազար/դրամ, մարզիչ Արտյոմ Բաղդասարյանին՝ 15000/տասնհինգ/ հազար դրամ:
2. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի ձյուդոյի պատանիների առաջնության 3-րդ մրցանակակիր՝ Ախուրյան համայնքի Արևիկ բնակավայրի բնակիչ Գրիգոր Արտակի Երեմոզյանին 10000/տասը հազար/ դրամ:
3.«Աշխարհագրություն» առակայի օլիմպիադայի եզրափակիչ փուլի մասնակից/ 3-րդ կարգի դիպլոմ/ Ախուրյան համայնքի Այգաբաց գյուղի բնակիչ Մարիամ Համլետի Ավագյանին՝ 30000/երեսուն հազար/ դրամ, աշխարհագրության ուսուցիչ Մանվել Բարսեղյանին՝ 15000/տասնհինգ/ հազար դրամ:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի ԹԻՎ 10 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման 2021 թվականի ծրագիրը հաստատելու մասին» թիվ 10 որոշման թիվ 1 հավելվածը շարադրել ներ խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 21/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայասատանի Հնարապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը և գյուղատնտեսական նշանակության արոտավայրերը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:
2. Հողամասերի և արոտավայրերի օտարման մեկնարկային գին սահմանել տվյալ պահին գործող կադաստրային արժեքի չափով :
3. Գյուղատնտեսական նշանակության Հողամասերի և գյուղատնտեսական նշանակության արոտավայրերի օտարման պայմաններն հաստատել համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի, կետերի դրույթներով՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալությամն օգտագործման տրամադրելու 2021 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23/

Լսեցին

«ՀԵՐՈՍՆԵՐԸ ՉԵՆ ՄԱՀԱՆՈՒՄ» ԳԻՐՔ - ՀՈՒՇԱԼԲՈՄԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ դրույթներով և հիմք ընդունելով Գագիկ Վարդանյանի 2021 թվականի մարտի 4-ի դիմումը՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

«Հերոսները չեն մահանում» գիրք-հուշալբոմի տպագրության համար Գագիկ Վարդանյանին տրամադրել 50000/հիսուն հազար/ դրամ:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24/

Ավագանու անդամներ՝
ՖՐՈՒՆԶԵ ԱՆՏՈՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԲԱԲՈՒՋՅԱՆ

ԺԻՐԱՅՐ ԳԱԲՈՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԴՐՄԵՅԱՆ

ՎՈԼՈԴՅԱ ԷԼԲԱԿՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱՄԻԿՅԱՆ

ՎԱԼՈԴՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼԱԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱԹՈՍՅԱՆ

ՄՀԵՐ ՄՆԱՑՅԱՆ

ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Համայնքի ղեկավար
ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Լուսինե Մաթևոսյանը
_____